ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ՄԵՆՔ ԱՂՈԹՈՒՄ

Աղոթել նշանակում է խոսել Երկնային Հոր հետ: Նա միշտ ցանկանում է, որ դուք խոսեք Իր հետ, և Նա միշտ լսում է: Նա պատասխանում է ձեր աղոթքներին բազմաթիվ եղանակներով: Նա կարող է ձեզ հուշում կամ զգացողություն տալ Սուրբ Հոգու միջոցով: Կամ Նա կարող է հուշել մեկ ուրիշին օգնել ձեզ:

Ինչպես աղոթել

Փակեք ձեր աչքերը, խոնարհեք գլուխը և ծալեք ձեռքերը:

Սկսեք ասելով . «Թանկագին Երկնային Հայր»:

Խոսեք Երկնային Հոր հետ հարգանքով և ակնածանքով:

Վերջում ասեք՝ «Հիսուս Քրիստոսի անունով, ամեն»:

Դուք կարող եք աղոթել բարձրաձայն կամ մտքում՝ ցանկացած ժամանակ:

Ահա մի քանի բաներ, որոնց համար դուք կարող եք աղոթել .

Շնորհակալություն հայտնեք Երկնային Հորը այն բաների համար, որոնց համար դուք երախտապարտ եք:

Պատմեք Նրան օրվա ընթացքում տեղի ունեցած դժվարությունների կամ լավ բաների մասին:

Խնդրեք Նրան օգնել ձեզ, երբ վախենում եք կամ չգիտեք, թե ինչ անել:

Խնդրեք Նրան օրհնել մեկ ուրիշին, ով օգնության կարիք ունի: